Visa քարտերով «Արի՛ նոր էմոցիաների հետևից» արշավի մասնակցության պայմաններ

1. Սույն թվականի մայիսի 29-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում Visa տեսակի քարտերի (այսուհետ՝ Քարտ), (բացառությամբ Visa Business քարտի) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար Ինեկոբանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):
2. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է www.inecobank.am կայքում:
3. Բանկն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն փաստաթղթում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի www.inecobank.am կայքում:
4. Արշավի իրականացման ժամանակահատված է սահմանվում սույն թվականի մայիսի 29-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ:
5. Արշավը նախատեսված է գործող և նոր Քարտերի համար և իրականացվում է երկու մասով:

6. Մաս 1: Խաղարկություն գործող Քարտապանների միջև

6.1 Բանկի բոլոր գործող Visa Քարտապանները սույն թվականի մայիսի 29-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում կատարելով հանրագումարային 100,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) վճարային գործարքներ՝ հնարավորություն կունենան մասնակցել Բանկի կողմից կազմակերպվող խաղարկությանը (այսուհետ՝ Խաղարկություն):

6.2 Խաղարկության ընթացքում պատահականության սկզբունքով ընտրված 101 հաղթողի կտրամադրվեն՝

- Մեկ Քարտապանի՝ ուղևորություն երկու անձի համար դեպի Թայլանդ: Ուղևորությունը ներառում է երկկողմանի ավիատոմս, հյուրանոց և նախաճաշ,
- Հարյուր Քարտապան հնարավորություն կունենա շահելու հետևյալ մրցանակներից մեկը՝
    - 50 հատ Յելլ Էքստրիմ Պարկի Զիփլայնի տոմս՝ նախատեսված երկու անձի համար, և փոքրիկ հյուրասիրություն
    - 50 հատ Սքայքլաբի տոմս՝ նախատեսված 10 րոպե պարապլանով թռիչքի համար:

6.3 Սույն փաստաթղթի 6.2 կետով սահմանված ուղևորությունը կներառի 2 հատ էկոնոմ դասի ավիատոմս դեպի Թայլանդ (հետադարձով), հյուրանոցի 7 օրյա գիշերակաց և նախաճաշ՝ 2 անձի համար 08.01.2025 – 08.04.2025թթ. ժամանակահատվածում:

6.4 Հաղթող մասնակիցները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ GIGACalculator.com)

6.5 Խաղարկությունը կկազմակերպվի մինչև 2024թ.-ի նոյեմբերի 1-ը:

7. Մաս 2: Երաշխավորված պարգևատրում

7.1 Արշավի ժամանակահատվածում այն հաճախորդները, ովքեր ձեռք կբերեն իրենց առաջին քարտը Ինեկոբանկից (Visa Digital, Visa Classic, Visa Gold, Visa Platinum, Visa Signature) և Հայաստանում և/կամ արտերկրում կիրականացնեն վճարային գործառնություններ, կստանան երաշխավորված պարգևատրումներ վճարային գործառնությունների հանրագումարային ստորև նշված սահմանաչափերին համապատասխան.

- 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամից մինչև 4,999,999 (չորս միլիոն ինը հարյուր ինսունինը հազար ինը հարյուր ինսունինը) ՀՀ դրամի (կամ համարժեք արտարժույթ) վճարային գործառնություններին դեպքում Քարտապանը հնարավորություն կունենա ընտրելու հետևյալ մրցանակներից մեկը՝
    - Փաթեթ 2 անձի համար Ապագա ռեզորթից և Յելլ Էքստրիմ Պարկից (Ստանդարտ սենյակ երկու անձի համար և թռիչք Ձիփլայնով)
    - Սքայքլաբի տոմս՝ նախատեսված 20 րոպե պարապլանով թռիչքի համար:
- 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) և ավելի վճարային գործառնությունների դեպքում Քարտապանը հնարավորություն կունենա ընտրելու հետևյալ մրցանակներից մեկը՝
    - Օդապարիկով թռիչք Սքայբոլի հետ
    - Փաթեթ 2 անձի համար Ապագա ռեզորթից և Յելլ Էքստրիմ Պարկից (Քոթեջ երկու անձի համար, թռիչք Ձիփլայնով, Ձիավարություն, ՕՖՖ-ռոուդ և ընթրիք)

7.2 Յուրաքանչյուր հաճախորդի հնարավոր է տրամադրել 7.1-րդ կետով սահմանված միայն մեկ պարգևատրում:

7.3 Պայմանները տարածվում են միայն 29.05.2024 – 29.08.2024թթ.ընթացքում առաջին անգամ Ինեկոբանկում պատվիրված Քարտի վրա:

7.4 Բոլոր այն նոր Քարտապանները, ովքեր Արշավի Մաս 2-ի շրջանակում չեն կատարի 7.1 կետում նշված սահմանաչափերի վճարային գործառնությունները, սակայն կբավարարեն սույն փաստաթղթի 6.1 կետում նշված պայմաններին, նույնպես կմասնակցեն խաղարկությանը:

7.5 Ապագա ռեզորթի և Յելլ Էքստրիմ պարկի կողմից առաջարկվող փաթեթը հնարավոր չէ օգտագործել 30.12.2024 – 10.01.2024թթ.-ի ընթացքում:

Ընդհանուր պայմաններ.

8. Արշավին մասնակցելու համար Քարտապանները պետք է նվազագույնը ամսական մեկ անգամ մուտք գործեն InecoMobile հավելված:
9. Արշավի մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ այլ տեսակի վճարներ:
10. Քարտից քարտ փոխանցումները, բանկային հաշիվների միջև փոխանցումները, Քարտով կատարված կոմունալ վճարումները, էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները չեն դիտարկվի որպես վճարային գործառնություններ:
11. Կից Քարտերի Քարտապանները չեն կարող մասնակցել Արշավին:
12. Գործառնությունները հաշվարկելու համար հիմք է ընդունվում գործարքի կատարման ամսաթիվը:
13. Արշավի շրջանակում Բանկի կողմից յուրաքանչյուր պայմանի համար սահմանված նվերները հաճախորդի պահանջով ենթակա չեն փոխարինման այլ ապրանքի, ծառայության կամ գումարի հետ:
14. Բանկը պատասխանատվություն չի կրում Արշավի շրջանակում սահմանված նվերների որակի և համագործակցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների համար:
15. Վճարային գործարքների հանրագումարի հաշվարկում չեն ներառվելու չեղարկված գործարքները:
16. Արշավի խաղարկությունը նախատեսվում է ամփոփել և մրցանակները Քարտապաններին տրամադրել մինչև 01.11.2024թ.-ը:
17. Արշավի ընթացքում հաղթող ճանաչված մասնակցի Քարտը մրցանակի տրամադրման պահին պետք է լինի գործող:
18. Արշավի ընթացքում հաղթող մասնակիցներին սահմանված մրցանակները տրամադրելու նպատակով Բանկի աշխատակիցը հեռախոսազանգի կամ էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի միջոցով կապ կհաստատի վերջիններիս հետ:

19. Յուրաքանչյուր հաճախորդ սույն Արշավի մաս 2-ին կարող է մասնակցել մեկ անգամ միայն՝ Բանկում առաջին քարտով՝ Visa տեսակի:
20. Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:
21. Քարտապանները կարող են ստանալ սույն փաստաթղթով սահմանված մրցանակները մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը: Նշված ժամկետից հետո մրցանակները ենթակա չեն տրամադրման:
22. Սույն փաստաթղթի 6.1 և 7.1 կետերով սահմանված նվեր քարտերի տրամադրման անհնարինության դեպքում Բանկի կողմից վերջիններս կփոխարինվեն համարժեք այլ նվերով:
23. Ինեկոբանկ ՓԲԸ աշխատակիցները և վերջիններիս հետ փոխկապակցված անձինք չեն կարող մասնակցել Արշավին:

Ինեկոբանկ ՓԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ www.inecobank.am, կամ զանգահարել 010-510-510 հեռախոսահամարով:

Ինեկոբանկ ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: